հայ–թիւրքական սահմանավէճը լուծէր Խորհրդ. Ռուսաստանի բարեկամական միջամտութեամբ. 3) Հայաստանը համաձայնում էր թոյլ տալ անցնելու իր ճանապարհներով ռուսական զօրքերին. Հայաստանի վրայով դէպի Թիւրքիա փոխադրուելիք զէնքի 30%ը պէտք է մնար Հայաստանում իբրև ինքնապաշտպանութեան միջոց. 4) Հայաստանն ընդունում էր Խորհրդ. Ռուսաստանի միջնորդութիւնը իր և հարևանների հողային վէճերը լուծելու համար. 5) Խորհրդ. Ռուսաստանը պէտք է վճարէր Հայաստանին երկու և կէս միլիոն ոսկի ռուբլի, պէտք է բանար նաւթային ճանապարհը, տար երկրագործական գործիքներ, յանձնէր Մոսկւայում գտնուող էջմիածնական գոյքերը, դիւրութիւններ տար Ռուսաստանի մի քանի կենտրոններում հաւաքուած հայ գրենական և գեղարուեստական երկերը Հայաստան փոխադրելու, արտօնէր և աջակցէր հայ գաղթականների վերադարձին և այլն:

Համաձայնութիւնը երկուստեք կայացաւ, և Լեդրանը մեկնեց Բագու՝ ստանալու համար Մոսկւայի վերջնական հաւանութիւնը, որից յետոյ պիտի վերադառնար Երևան, ուր և պիտի ստորագրուէր «բարեկամութեան և խաղաղութեան դաշնագիրը Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև»: Գնաց — և այլևս դաշնագրի խօսքը չլուեց: